

ՀԱՅՈՑ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Տեղանքի միավորներին և բնակավայրերին տրվող հատուկ անունները հաճախ ծագում են անվանակոչվող միավորների բնական հատկանիշների զգայական կամ իմացական ընկալումներից, այսինքն՝ բաղադրված են որականիշ բառերից, հիմնականում ածականներից, դերբայներից, երբեմն թվականներից, բայց գուգահեռաբար նաև գոյականներից, որոնք տեղանունների կազմում հաճախ դառնում են որակի նշանակում՝ *Ուղտասար* - սարի գծագրությունը նման է ուղտի, *Ուխտաձոր* - ձոր է, որտեղ հեթանոսության շրջանից ուխտատեղի էր, *Գետավան* - գետի ափին կառուցված ավան է, *Արևշատ* - արևկող գյուղ է, *Քարագյուղ* - քարքարուտներում ստեղծված բնակավայր և այլն: Լեզվական այս փաստերը թույլ են տալիս վերականգնել բառանվան ուղղակի կապը անվանակոչվող միավորի որակների հետ: Հետևաբար՝ որքան էլ պայմանական են թվում անվանադրումը, անվան և նրա նշանակած միավորի հարաբերությունը, իրականում դրանք փոխկապակցված են: Հին հույների դասական բանավեճը «Ֆյուսեյ»-ի (ըստ բնության) և «թեսեյ»-ի (ըստ դրության) կողմնակիցների միջև ինչպես վաղնջական, այնպես էլ ժամանակակից տեղանվանագիտության մեջ կարող է լուծվել «Ֆյուսեյ»-ի օգտին: Պլատոնի հայտնի երկխոսությունը Կրատիլոսի, Սոկրատեսի և Հերմոգենեսի միջև անունների ճշտության կամ իսկության մասին մշտապես արդիական է¹. անվանադիրներն անընդմեջ բախվում են այդ երկրնտրանքին՝ անուն ընտրելիս առաջնորդվել անվանվողի առարկայական կամ հոգևոր որակներով, որոնք կարող են փոփոխական լինել, թե՛ գնալ դյուրին ճանապարհով՝ պայմանավորվել անկախ որակներից:

Տեղանունների հիմնական մասը կազմվում է անվանվող երևույթի արտաքին և ներքին բնութագրիչ հատկանիշներ արտահայտող բառերից, որոնց միանում են տեղանքի ու բնակավայրերի տեսակներ արտահայտող եզրույթները, վերջիններս գիտական գրականության մեջ կոչվում են անվանակարգային (նոմենկլատուրային) բառեր, գործիական՝ *արտ, այր, անձավ, դաշտ, դար, թաղ, լեռ, քար, լիճ, գետ, ջուր,*

¹ Տե՛ս <https://classics.nsu.ru/bibliotheca/plato01/krati.htm>

գյուղ, ավան, շեն և այլն: Հայերենում, ինչպես և այլ հնդեվրոպական լեզուներում տարածված է հատկանիշ արտահայտող որոշիչների նախադաս դիրքը, որոշյալ բառերը, իբրև կանոն, հետադաս են: Նշենք, որ տեղանուններում որակ կարող են արտահայտել նաև հատկացուցիչ-հատկացյալ կառույցները՝ իբրև սերում և ծագում, վերաբերություն նշանակող բառակապակցություններ, որտեղ ևս հատկացուցիչը շարադասորեն նախադաս է: Հայոց տեղանունների տարածված բառակազմական կաղապարները հետևյալն են. Ա) հողակապով կամ անհողակապ բարդություններ, որտեղ առաջին բաղադրիչը որականիշ բառ է. այն կարող է ենթարկվել հնչյունափոխության, երկրորդը տեղանքի կամ բնավայրի տիպերի անվանում է՝ *Բարձրաշեն, Ձորաքար, Թեքասար, Խասգյուղ, Ծմակահող, Հարթագյուղ, Մաքրավան, Մաքրաշեն, Կարմրաքար, Կարմրակուճ, Կաթնաղբյուր, Չարաբերդ, Չարահան, Մատանաքար, Բ*) հարադիր բաղադրություններ՝ հիմնականում երկանդամ, թեև հնարավոր են նաև եռանդամ կապակցություններ՝ *Չավակատուր լեռ, Թթու ջուր, Հին թաղեր, Մեծ աղբյուր, Մեծ Ագարակ, Ներքին գյուղ, Վերին գյուղ, Վերին գավառ, Մատանի քիթ, Յոթն ախպոր աղբյուր, Սյիտակ աղբյուրի ձոր, Սուրբ Հակոբի աղբյուր, Սուրբ Հակոբի լեռներ, Սուրբ Հակոբի հովիտ, Սուրբ Հակոբի ձոր* և այլն:

Լեզուն միշտ ձգտում է խուսափել երկարաբանությունից, և կարճ ու սեղմ ձևերը մրցակցության մեջ հաղթում են իրենց բազմանդամ համարժեքներին: Ուստի բառակապակցական տեղանունները սկզբում խոսքային մակարդակում, ապա նաև գրավոր տարբերակներում վերածվում են հողակապավոր կամ անհողակապ բարդությունների, երբեմն էլ, անվանակարգային բառերի սղմամբ, պարզ-արմատական միավորների, զորօրինակ՝ *Բարձր ավան*→*Բարձրավան*→*Բարձր, Թեժ սար*→*Թեժասար*→*Թեժ, Քաղցր ջուր*→*Քաղցրաջուր*→*Քաղցր, Կարմիր քար*→*Կարմրաքար*→*Կարմիր* և այլն:

Լեռնանունների, ջրանունների և բնականունների իմաստաբանական վերլուծության ընթացքում առանձնացվում են այս միավորների բովանդակության պլանի նվազագույն բաղադրիչները, որոնք կոչվում են իմաստույթներ: Տեղանվանագիտության մեջ ընդունված է առանձնացնել հետևյալ 7 հիմնական իմաստույթները (սեմա, հունարեն՝ նշան)². 1) «զծագրություն, օյեկտի ձև», այս իմաստույթն արտահայտված է բազմաթիվ ածականներով, որոնց սակավ մասը հայերենում տեղանուն դառնալու ներուժ ունի՝ *կլոր, ծուռ, թեք, հարթ, գառիվայր*, 2) «ջրի հոսքի յուրահատկությունները»՝ *արագ, վարար, խաղաղ*, 3) «ջերմային հատկանիշներ»՝ *սառն, ջերմ, թեժ, գուլ*, 4) «հողաշերտի յուրահատկությունները»՝ *հողե, կավային, տիղմային, ավազե, ճահճային, քարե*, 5) «հոտ, բույր»՝ *անուշ, գարշ*, 6) «համային զգացողություններ»՝

² См. у Фролов Н. К. Избранные труды по языкознанию, Топонимика и этнонимика, том II, Тюмень, 2005, էջ 321-327:

քաղցր, թթու, դառն, 7) «գույն, երանգ»՝ սև, սպիտակ, կարմիր, ոսկի, կապույտ, կանաչ և այլն: Մենք այս 7 իմաստություններին կհավելենք ևս երկուսը, որոնք կիրառական են հայոց տեղանուններում՝ ա) «հոգևոր որակների իմաստությո՞ւր»՝ սուրբ, աստվածային, սատանայական և բ) «բարոյական զգացումներին առնչվող հատկանիշները»՝ վեհ, գոռ, ազնիվ, բարի, չար արդար այլն: Իմաստությո՞ւր բովանդակության պլանի նվազագույն միավորն է, որը լեզվի մեջ շրջապատող աշխարհի իրականությունների, նշանակվող առարկաների տարբեր որակների, բնութագրիչների հիմնային արտացոլումն է, բաղադրիչային վերլուծության գործառական միավորը: Իմաստությունների դասակարգումը հնարավոր է դարձնում բառապաշարային միավորների կազմության ընթացքն առավել հստակ համակարգել³:

Մեր առանձնացրած 9 իմաստություններից յուրաքանչյուրն ունի բնութագրիչ ածականների ենթահամակարգեր, որոնք տեղանուն դառնալու տարբեր բաշխվածություն ունեն: Այժմ անդրադառնանք նշյալ 9 դասերի մեջ ընդգրկված բառերից առաջացած տեղանվանահիմքերի հնարավոր բաշխմանը հայկական տեղանուններում՝ որպես աղբյուր ունենալով «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հարուստ նյութը⁴:

1) Իմաստաբանական տիպը՝ «օբյեկտի եզրապատկերը», դրսևորվում է մի քանի իմաստությունների համակցությամբ, որոնք նույնական չեն իրենց բովանդակությամբ, բայց պայմանականորեն միավորված են, որովհետև ունեն տարբեր աշխարհագրական միավորներ նշանակող ընդհանուր իմաստային հատկանիշ:

ա) «Օբյեկտի ձևը, գծագրությունը» իմաստությո՞ւր միավորում է հիմնականում ածականներ և փոխաբերական իմաստի հետևյալ բառեր:

Թեք - «դեպի մի կողմ հակված, կախված, ծոված, շեղ», այս ածականը հայկական տեղանուններում մեծ արտահայտություն չունի: Այն տեղանուն է դարձել բարդությունների մեջ՝ և՛ հոդակապով, և՛ առանց դրա: Ունենք՝ *Թեքասար>Թեքսար* (լեռնագագաթների անվանումներ են Վայոց ձորում և այնտեղ գտնվող հանքավայրերի անվանումներ):

Ձառիթափ - «շեշտակիորեն իջնող թեքություն»։ այս հոմանիշ ածականից ունենք գետակի, գյուղի և սարավանդի անվանումներ դարձյալ Վայոց ձորում, ածականը տեղանվանացել է ուղիղ ձևով՝ *Ձառիթափ*:

Ծուռ - «ոչ ուղղագիծ, բեկված»: Այս արմատը լեռնանուն և գյուղանուն է դարձել Կարինում և Տավուշում՝ *Ծուռք>Ծուռս, Ծուռ կամուրջ, Ծուռքար*:

Կլոր - «շրջանի՝ օղակի ձև ունեցող, բլուրակաձև»: Ունենք *Կլորիկ*,

³ Տե՛ս «Большой энциклопедический словарь. Языкознание», М., 1998, էջ 437:

⁴ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1-5 հատորներ, Եր., 1986, 1988, 1991, 1998, 2001:

Կլորսար, Կլոր դար, Կլոր եկեղեցի լեռնանունները Գեղարքունիքում և Տավուշում:

Տափ - «տափարակ, հարթ տարածություն, հարթավայր, հարթություն, գետին»: Արմատը տեղանուն է դառնում թե՛ զրո ձևությամբ, թե՛ ածանցներով, թե՛ բարդության կազմում՝ որպես առաջին կամ վերջին բաղադրիչ՝ *Տափ, Տափեր, Տափերական, Տափավանք, Տափասար, Տափառու, Երնջատափ, Սարիտափ*: Սրանք բոլորը գյուղանուններ են:

Տափակ - «հարթ մակերևույթ ունեցող, առանց խորդուբորդությունների»: Ունենք հետևյալ տեղանունները՝ *Տափակ, Տափակ քար, Տափակ ձոր, Տափակ մայրի*: Սրանք ջրանուններ և լեռնանուններ են Խարբերդում, Կոտայքում և Տավուշում:

Հարթ - «հավասար մակերեսով, առանց խորդուբորդությունների, տափարակ»: Գործուն տեղանվանահիմք է՝ *Հարթ, Հարթք, Հարթենք, Հարթան, Հարթիկ, Հարթագումեր, Հարթագյուղ, Հարթաշեն, Հարթապտուկ, Հարթավան* և այլն:

բ) «Մեծություն, ծավալ» իմաստույթն ունի մի յուրահատկություն, որի շնորհիվ կարող են ստեղծվել ոչ միայն առանձին տեղանուններ, այլև երկանդամ հակադրությունների վրա կառուցված տեղանվանական շարքեր: Օբյեկտի չափերի իմաստային հատկանիշը, որպես կանոն, որոշվում է հորիզոնական կամ ուղղահայց հարթություններում նրա տարածությամբ: Տեղանվանացանկերում ունենք տարածականորեն հակադրվող հետևյալ անվանումները՝ *Մեծ Հայք - Բարձր Հայք-Խորագույն Հայք - Փոքր Հայք, Մեծ գյուղ - Փոքր գյուղ, Մեծ սար - Փոքր սար. Մեծ Ծոփք - Փոքր Ծոփք, Մեծ Կովկաս - Փոքր Կովկաս, Մեծ Մայմեխ - Փոքր Մայմեխ, Մեծ Առանք - Փոքր Առանք* և այլն: *Մեծ* արմատը նաև առանձին կարող է տեղանուններ կազմել, որովհետև անվանվող միավորի մեծ չափեր ունենալն արդեն տարածության մեջ նշանակալի դառնալու գրավական է՝ *Մեծանց, Մեծաձոր, Մեծայր, Մեծառու, Մեծամոր, Մեծ անապատ, Մեծ դաշտ, Մեծ աղբյուր Մեծ գետ, Մեծ բերդ, Մեծ գյուղ*, և այլն:

Երկանդամ տարածված հակադրություն են ստեղծում նաև *ներքին-վերին* տեղանվանահիմքերը՝ *Խաղաղ Ներքին-Խաղաղ Վերին, Ներքին Չարբախ-Վերին Չարբախ*: Նման կաղապար, որպես կանոն, ունեն բնականունները: Բնականունների կազմում հանդիպում են նաև *բարձր, խոր* և *նեղ* արմատները՝ *Բարձր լեռ, Բարձր քար, Բարձր շեն, Բարձր վանք, Խոր, Խորեան, Խոր գոմ - Խորագոմ, Խորագույն Հայք, Խորանիստ, Խորաձոր(ք), Խորակերտ, Խորանիստ, Խորաբազուկ, Նեղ Փողնի, Նեղբողազ, Նեղուտ, Նեղուց* և այլն:

2) «Ջրի հոսքի յուրահատկություններ». այս իմաստային դաշտին պատկանում են հետևյալ հասկացությունների անունները:

Վարար - «հորդ, հորդաջուր, հորդառատ». տեղանուն դառնում է հիմնականում ջրանունների և նրանց մերձակայքում գտնվող բնակա-

նունների կազմում: Ունենք՝ *Վարարակ, Վարարակն, Վարարկի ջուր, Վարարկի ջրանցք, Վարարակի առու, Վարար աղբյուր*: Նրա հակառակ- շը *խաղաղ*ն է, որը լայն բովանդակության շնորհիվ կազմում է նաև լեռ- նանուններ՝ *Խաղաղ, Խաղաղ Ներքին, Խաղաղ Վերին, Խաղաղաձոր, Խաղաղջուր*:

Հորդ - «առատաջուր, վարար». այս արմատով վկայված են մի գյու- դանուն (*Հորդուն*) Արարատում և լեռ Կիլիկիայում:

3) «Ջերմային հատկանիշներ». այս իմաստային դաշտի ածականնե- րը բավականին գործունակ տեղանվանահիմքեր են՝ *սառն, ջերմ, թեժ*:

Սառն - «ցածր կամ հարաբերականորեն ցածր ջերմաստիճան ու- նեցող». այս ածականը, որը նաև գոյականական կիրառություն ունի, ե- զակի սեռականի կամ հոգնակի հայցականի գրաբարյան ձևությամբով փոքր բնականուններ է կազմում՝ *Սառնա, Սառնի, Սառնես/իս/ուս*, բայց ավելի հաճախ որոշիչ-որոշյալ հարաբերություններն արտահայ- տող բարդությունների կազմում լեռնանուններ, ջրանուններ և գյուղա- նուններ է կերտում՝ *Սառնաղբյուր, Սառնակունք, Սառնաջուր, Սառ- նասար, Սառնաքար, Սառնաձակեր*:

Ջերմ, թեժ - «տաք, ջեռ, կեզ». այս ածականները կարող են տեղա- նուն դառնալ և՛ մաքուր հիմքով, և՛ տարբեր ծագման ածանցներով, և՛ բարդությունների կազմում՝ արտահայտելով որոշիչ իմաստ՝ *Ջերմ* (գետ, աղբյուր, գյուղ, ջրվեժ), նաև՝ *Ջերմա-Ջերման, Ջերմակ-Ջերմուկ- Ջերմիկ, Ջերմաղբյուր, Ջերմաձոր, Ջերմուկի բերդ, Թեժ, Թեժառույք, Թեժսար, Թեժ լեռ* և այլն:

4) «Հողաշերտի յուրահատկություններ» իմաստությո՞ր տեղանվանա- կերտման մեջ կարևոր դերակատարում ունի, որովհետև անվանվող միավորի այս հատկանիշը տարածության մեջ նրան ճանաչելի է դարձ- նում և կարևոր է մարդկային կենսագործունեության համար: Տվյալ իմաստային դաշտում ունենք տեղանուններում վկայված հետևյալ ածականները՝ *հողե, կավե, ավազե, քարե*: Հայկական բարձրավանդակի տարածքը հրաբխային ծագում ունի, առավելապես քարոտ է, ուստի տե- դանուններում գործունը *քարե* որոշիչն է:

Հողե – *Հողե, Հողի, Հողիկ, Հողիս, Հողկերտ, Հողաբերդ - Հողբերդ/իկ*. գրեթե բոլորը փոքր բնականուններ են:

Կավե - *Կավե, Կավիկ, Կավ, Կավե քաղաք, Կավատեղ, Կավդար*: Այս ածականով կազմվել են ոչ միայն բնականուններ, այլև լեռնանուն- ներ:

Ավազե - *Ավազ, Ավազաբերդ, Ավազաղբյուր, Ավազ գետիկ* (գյու- դեր են Արևմտյան Հայաստանի տարածքում Մուշ, Ջեյթուն):

Քարե - *Քարեր, Քարինք, Քարընկեց, Քարդուռ, Քարթաղ, Քարգահ, Քարբույս, Քարեպնակ, Քարեվան, Քարեկամուրջ, Քարզուխ Ներքին, Քարզուխ Արտաքին*: Այս հիմքով կազմվել են ոչ միայն լեռնանուններ, այլև ջրանուններ և բնականուններ պատմական և ներկայիս Հայաս-

տանի ողջ տարածքում. այն ընդհանրական տեղանվանահիմք է:

5) «Հոտ, բույր» իմաստույթը հայկական տեղանուններում արտահայտվում է միայն *անուշ* ածականով, որը կարող է գրո ձևույթով տեղանուն դառնալ կամ *ավան(ք)* արմատի հետ բարդություն կազմել:

Անուշ՝ «դուրեկան, ախորժեղի» - *Անուշ*, *Անուշավան(ք)* - գյուղեր և աղբյուրներ են Սյունիքում, Արագածոտնում:

6) «Համային զգացողություններ». այս իմաստային դաշտից հայկական տեղանուններում հանդիպում են 3 հիմնական ածականներ՝ *քաղցր*, *թթու*, *դառն*: Նման որոշիչներից կազմվում են հիմնականում ջրանուններ և բնականուններ, հազվադեպ՝ լեռնանուններ, ամենագործունը *քաղցրն* է, մյուս երկուսը հանդիպում են եզակի օրինակներով:

Քաղցր - «շաքարին, մեղրին հատուկ համ ունեցող». օրինակ՝ *Քաղցրահայաց*, *Քաղցրաշեն*, *Քաղցրաջրի լեռներ*:

Թթու - «քացախի, կիտրոնի նման համ ունեցող»՝ Թթուջուր: Այս անվամբ ունենք լեռնանցք, գետ, գյուղեր, աղբյուրներ Արագածոտնի մարզում և Արցախում:

Դառն - «յուրահատուկ անախորժ համ ունեցող». *Դառն*, *Դառին* (գետ Կիլիկիայում):

7) Ընդհանրական և ամենատարածված իմաստույթներից է «գույն»-ը՝ «առարկայից անդրադարձող լուսային ճառագայթներից աչքերի ստացած տպավորություն». այն հարուստ հասկացական բովանդակություն ունի: Լեզվաբանության մեջ տարածված է գունանունների ընդհանրականության գաղափարը, ըստ որի՝ հիմնային են համարվում հետևյալ 11 գունանունները՝ *սպիտակ*, *սև*, *կարմիր*, *կանաչ*, *դեղին*, *կապույտ*, *բոսորագույն*, *շագանակագույն*, *վարդագույն*, *նարնջագույն* և *գորշ*: Միաժամանակ նշվում է, որ այս 11 գունանունները տարբեր լեզուներում կարող են նվազել: Որպես կանոն՝ սահմանվում է առավելագույն գունաքանակը, որը, կախված լեզվակիր հանրության աշխարհընկալումից, քաղաքակրթական ուղղվածությունից և գուտ լեզվական-բառային հնարավորություններից, կարող է ինքնուրույն անվանում չստանալ և ածանցվել մյուսներից՝ իբրև երանգ: Հիմնային գունանունները բառապաշարում ուղիղ համեմատական կապի մեջ չեն լուսային սպեկտրի ավանդական յոթնյակի հետ՝ *կարմիր*, *ծիրանի*, *նարնջագույն*, *դեղին*, *կանաչ*, *երկնագույն*, *կապույտ*, *մանուշակագույն*: Գունանունների իմաստային համակարգում առանձնացվում են միջուկը և ծայրամասերը: Միջուկը կազմում են իմաստային տեսանկյունից անկախ, ինքնակա ածական գունանունները, իսկ ծայրամասում դրանց ստորադասվող, այսինքն՝ լրացնող գունանուններն են⁵: Միջուկը կազմող ածականների մեջ գույնի գաղափարն առաջնային է և չի արտահայտվում այլ գունային ածականների միջոցով. միջուկային գունա-

⁵ Տե՛ս *Фрумкина Р. М.* Цвет, смысл, сходство, М., 1984, էջ 15-20:

նունները գործածության բարձր հաճախականություն ունեն, բառակազմական ճկունություն, օրինակ՝ *կարմիր-կարմրություն, կարմրավուն, կարմրավոր, կարմրել, կարմրիկ*, իսկ բառաբարդման հնարավորություններն ավելի մեծ են՝ *Կարմրաշեն, Կարմրաթառ, Կարմրագյուղ, Կարմրամորուս, Կարմրաջուր, Կարմրալանջ, Կարմրահող, Կարմրաթև, Կարմրաղբյուր, Կարմրաշեն, Կարմրաբեր* և այլն:

Ծայրամասային գունանունների իմաստը բացատրվում է միջուկային անդամների միջոցով, այսպես՝ կարմրադեղին, սևագորշ, կապտականաչ, գորշաձերմակ և այլն: Ծայրամասային գունանունները, որպես կանոն, տեղանվան հիմնաբառ չեն դառնում, որովհետև որակյալ նշաններ չեն, նրանք հստակ չեն բնորոշում անվանվող օբյեկտը, բացի այդ՝ մարդկանց մեծամասնությունը հստակ չի տարբերակում գունային նրբերանգները: Գունակությունը (դալտոնիզմը) բավական տարածված երևույթ է:

Որոշ լեզվաբաններ տարբերակում են նաև միջանկյալ գունանուններ, որոնք ձգտում են դեպի միջուկը կամ հակառակը: Հայերենի միջանկյալ գունանունների շարքին կարող են դասվել *ծիրանի-ն, գորշ-ը*: Հայերենի համար, որպես գունային հարաբերականորեն կայուն միջուկ, առանձնացվում են 6 գունանիշ ածականներ՝ *սև, սպիտակ, կարմիր, կանաչ, կապույտ, դեղին*⁶: Գունանունները տեղանուն են դառնում և՛ արմատական հիմքերով, և՛ բարդությունների կազմում, և՛ ածանցների միջոցով, և՛ բառակապակցությունների կազմում: Բերենք գունանուն հիմքով տեղանունների տարածված օրինակներ՝ *Գորշաքար, Դեղին, Դեղինքար, Դեղինաղբյուր, Ծիրանիք, Ծիրանիս, Ծիրանյաց լեռներ, Կանաչ գետ, Կանաչկող, Կապուտկող, Կապուտան, Կարմիր, Կարմիրակն, Սևքար, Սևահող, Սևաբերդ, Սև ամրոց*:

Պատմական Հայաստանի և ներկա Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության տեղանվանացանկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բուն կամ մեր լեզվի համար հիմնային գունանուններից տեղանվանակերտ ամենամեծ ներուժն ունի *կարմիր* ածականն իր հոմանիշ՝ *աչ* ձևով: Այս գույնն ունի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստային հարուստ բովանդակություն, ուստի հայ անվանադիրների համար այն բազմանշանակ է և համակիրառելի հիմնավոր պատճառներով. նախևառաջ կարմիր գույնը բնորոշ է հայաստանյան բնությանը, բարկ արևից կիզված հողին ու ժայռերին, հրաբխային ապարներին, բուսական աշխարհին, ծաղիկներին ու պտուղներին, ապա նաև՝ մեր պատմական ճակատագրին ու երազանքներին: Ընդ որում՝ կարմիր գունանունն ունի ինչպես երջանկաբեր իմաստ, այնպես էլ տառապալի:

8) «Հոգևոր կրոնական որակների իմաստույթ»՝ *սուրբ, աստվածա-*

⁶ Տե՛ս **Ս. Գրիգորյան**, Հայերենի գունանունները և նրանց լեզվաոճական արժեքը, Եր., 1998, էջ 66-70:

յին, սատանայական: Այս շարքում ամենագործունակը սուրբն է, սակայն պետք է նշել, որ սրա կիրառության առյուծի բաժինը վանքերի և սրբատեղերի անվանումներն են, թեև ունենք նաև այս իմաստային դաշտի որակներից կազմված մեծաթիվ լեռնանուններ, լեռները երկրայինի և երկնայինի հատույթում են, աստվածամերձ որակներով: Թվարկենք բնութագրական օրինակներ՝ *Սուրբբույս, Սուրբ լեռինք, Սուրբ թագավոր, Սրբազան, Սուրբ Աստվածածնի լեռ, Աստվածային լեռներ, Աստվածընկալ:* Բոլոր նշվածները լեռնանուններ են, բայց նման իմաստություններով բնականուններ, ջրանուններ, հնավայրեր ևս կան՝ *Սուրբ գյուղ, Սրբավան, Սուրբ կիրակի, Սուրբ դետ:* Վերջինս Վանի մերձակայքում հնավայր է, որտեղ, ըստ ավանդության, ի տես ամենքի տեղադրել են Հայկի նետով սպանված Բելի դին: Հայկի և Բելի պատմական ավանդազրույցի հետ է կապվում նաև Վասպուրականի *Աստվածաշեն* գյուղը, որտեղ դյուցազունների վաղնջական մարտերն են ընթացել: *Սատանա* իմաստույթը, ինչպես իր հականիշը, հիմնականում լեռնանուններ է ստեղծում՝ *Սատանաքար, Սատանի լեռներ, Սատանի քիթ*, այս անունով ունենք նաև հանրահայտ *Սատանի կամուրջը:*

9) «Բարոյական զգացումներին առնչվող հատկանիշները»՝ *վեհ, գոռ, ազնիվ, բարի, չար* շատ ավելի տարածված են իբրև տեղանուն ստեղծող կազմություններ: Պատճառը հայկական լեզվամտածողության հիմքում է, հայ անվանողի համար տեղանքի և բնակավայրերի բնութագրման լավագույն բնութագրիչները վերաբերում են դրանց հոգևոր՝ բարոյական և գեղագիտական բովանդակությանը. ճակատագրի բերումով արևի ներքո իր տեղի համար մահու և կենաց կռիվ մղող ազգն իր ուժը քաղել է երկնայինից՝ երկնային որակները դարձնելով երկրային, համատարած չարի մեջ որոնելով ու գտնելով բարին: Այսպես, օրինակ, ունենք հետևյալ հետաքրքիր տեղանվանական կազմությունները՝ *Ազնվաբերդ, Ազնվածոր, Ազնվաց ձոր, Ազնվաց դաշտ, Գոռ գետ, Մաքրավան, Մաքրատուն, Բարիձոր, Բարիշեն, Բարիք, Բարեբեր, Չարաբերդ, Չարագետ, Չարահան, Չարակնյա:* Բերված օրինակներում վկայված են թե՛ խոշոր ու միջին բնականուններ, թե՛ լեռնանուններ, թե՛ ջրանուններ:

Տեղանունների ստեղծման գործընթացը բոլոր լեզուներում ունի ակներև ընդհանրություններ և նուրբ տարբերություններ: Հենց այդ տարբերությունները բնորոշում են անվանադիր ժողովրդի լեզվամտածողությունը և պատմական ուղին: Եվ ինչպես մեր առաջին տեղանվանագետ քերթողահայր Խորենացին էր փորձում բացատրել մեր հնագույն տեղանունների ծագման հիմքերը՝ դրանց մեջ վերականգնելով նահապետ Հայկի ու նրա զարմի դյուցազուններին, հայոց արքաներին ու հերոսներին, նրանց կատարած գործերը, այնպես էլ հետագայի անվանադիրները շեշտը դրել են ոչ միայն անվանվող միավորների գծագրության, հողի և ընդերքի յուրահատկությունների, ջրի վարարության

և այլ կարևոր, նյութական որակների վրա, այլև դրանց բարոյական ազդեցության, հոգևոր կողմնորոշիչների: Վաղնջական ժամանակներից ցայսօր տեղանուններ կազմելիս հայ անվանադիրներն առավելություն են տվել «մեծություն, ծավալ», «հողաշերտի յուրահասկություններ», «գույն» և «հոգևոր-կրոնական որակներ» իմաստույթներին: Հնարավոր է կորցնել հողը՝ իր որակներով, բայց լեզուն պահում է այդ հողի հիշողությունը հատկապես տեղանունների միջոցով, որոնց բովանդակության հիմքում նյութական որակների հոգևոր վերաարժևորումն է:

Բանալի բառեր – տեղանուն, բառակազմություն, բարդություն, բառակապակցություն, որոշիչ-որոշյալ կապակցություններ, իմաստաբանություն, իմաստույթ, ներքին և արտաքին որակներ

НАРИНЕ ДИЛБАРЯН – Семантические компоненты армянских топонимов. – Топонимы часто имеют непосредственное отношение к естественно-природным реалиям; тематически их можно сгруппировать по общности определённых семантических признаков, указывающих на взаимосвязь номинативного акта и обозначаемых реалий. В топонимике принято выделять 9 сем, на основе которых образуются разные виды топонимов: 1) конфигурация объекта, 2) особенности водотока, 3) тепловой режим, 4) специфика грунта и почвы, 5) запах, 6) вкусовые ощущения, 7) цвет, 8) духовно-религиозные качества и 9) морально-эстетические качества. В армянских топонимах наиболее представлены следующие семы: конфигурация объекта, специфика грунта, цвет, как например: *Տափեր, Տափերական, Հարթք, Հարթենք, Հարթագուեր, Քարեր-Քարինք, Քարրկեց, Գարնրաշեն, Գարնրաթառ, Գարնրամորու* и т.д.

Ключевые слова: *топоним, словообразование, словосложение, словосочетание, конструкция определение-определяемое, семиотика, сема, внутренние и внешние качества*

NARINE DILBARYAN – The Semantic Components of Armenian Toponyms. – The proper names given to the geographical units are very often in direct relation with the natural characteristics of the external world realities and form thematic groups on the basis of this or that overlap of the semantic characteristics, which directly expresses the interconnection between the process of naming of the given geographical unit. Based on internal and external characteristics of the geographical units and the residences in toponymy it is accepted to underline the following 9 semes: 1) «drawing, the form of the object» the following sememe is expressed in various substantivized adjectives, some of them turn into toponyms with zero morpheme in Armenian, with suffixation, composition and in word-formation process – *ստափ (plain) հարթ(flat), գառնվայր (ramp), ծռւղ (hooked), թեք (slanting)*, 2) “the peculiarities of water flow” – *արագ (swift), վարար (turbulent), խաղաղ (peaceful)* 3) “temperature-related peculiarities” – *սառն (cold), ջերմ (warm), թեժ (hot), գոլ (humid)*, 4) “peculiarities of soil layers” – *հողե (soil), կավային (clay), տիղմային (sludge), ավազե (sand), ճահճային (swamp), քարե (stone)*, 5) «smell, odour» *սնուշ (nice), գարշ (smelly)*, 6) “flavour sensation” – *քաղցր (sweet), թթու (sour), դառն (bitter)*, 7) “colour, tint” – *սև (black), սպիտակ (white), կարմիր (red), ոսկի (gold), կապույտ (blue), կանաչ (green)*, 8) “spiritual and religious qualities” – *divine, devilish, holy, and 9) “moral and*

aesthetic qualities” – *evil, kind, proud etc.* In the Armenian toponyms, the majority form the ones with the 4 following semes “drawing, the form of the object”, “the peculiarities of the soil layer”, “colour”, and “spiritual and religious qualities” For example, *Տափեր, Տափերական, Հարթք, Հարթենք, Հարթագուեր, Հարթագյուղ, Քարեր-Քարինք, Քարրնկեց, Կարմրաշեն, Կարմրաթառ, Կարմրամորուս, Բարեբեր, Չարաբերդ,* etc.

Key words: *toponym, word formation, compounding, word combination, construct definition-definable, semiotics, seme, internal and external qualities*